Հավելված 2

«Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա
(Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
2023 թ. մարտի 4-ի N 1-Լ որոշման

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ԱԱԳԼ կառավարիչ-տնօրենի (այսուհետ՝ Տնօրենի) թափուր պաշտոնի համալրման համար հայտարարում է բաց մրցույթ:

ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԵՆ

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
2) Չափահաս ու գործունակ լինելը,
3) Բարձրագույն կրթությունը:

ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՎԵԼՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ՝

1) Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակությունը,
2) ԱԱԳԼ գործունեության բնագավառներին համապատասխանող գիտական աստիճանը,
3) Գիտական և գիտատեխնիկական գործունեության առնվազն 10 տարվա աշխատանքային փորձը,
4) Ղեկավար աշխատանքի և/կամ ծրագրերի կառավարման առնվազն 5 տարվա փորձը,
5) Միջազգային համագործակցության փորձը,
6) Բյուջետավորման և դրա իրագործման փորձի առկայությունը,
7) Գիտական կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգեր մշակելու փորձ կամ կարողությունները,
8) Երիտասարդ մասնագետների հետ աշխատանքի և մասնագիտական զարգացման ուղղորդման հմտություններ:

Որպես ցանկալի հմտություններ կդիտարկվեն գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտին վերաբերող և ոլորտը կարգավորող տեղական և միջազգային իրավական դաշտի և գործընթացների իմացությունը, համագործակցելու և բանակցելու հմտությունները, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու և ոչ ստանդարտ լուծումներ տալու հմտությունները, անձնակազմի հետ բարյացակամ և հարգալից աշխատանքի կարողությունը, որոնց վերաբերյալ կարծիք կազմվում է Տնօրենի ընտրության խորհրդի նիստի ժամանակ՝ հավակնորդին տրվող հարցերի միջոցով:

ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ.

1) դիմում Խորհրդի նախագահի անունով,
2) 1 գունավոր 3×4 չափի լուսանկար,
3) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
4) ինքնակենսագրությունը, այդ թվում՝ գիտական ձեռքբերումների վերաբերյալ տեղեկանք,
5) գիտական աստիճանի և (առկայության դեպքում) գիտական կոչման վկայականի(ների) պատճենը(ները),
6) ԱԱԳԼ առաջիկա 5 տարիների զարգացման տեսլականը՝ գործողությունների պլանով, արդյունքային ցուցանիշներով և ժամանակացույցով, փակ և ստորագրված ծրարով կամ անձնական էլ. փոստով՝ aanl.board@scs.am էլ. հասցեին:

Դիմումները և փաստաթղթերի ամբողջական փաթեթը առձեռն կամ պատվիրված փոստի միջոցով[1] պետք է ներկայացվեն ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչություն (Հայաստանի Հանրապետություն, 0028, ք. Երևան, Օրբելի եղբայրների փ. 22, հեռ. +374 10 210 140 (լրացուցիչ +112)),
կամ մեկ էլ. նամակի միջոցով ուղարկվեն անձնական էլ. փոստից՝ aanl.board@scs.am էլ. հասցեին մինչև 2023 թ. ապրիլի 9-ը ներառյալ:

Փաստաթղթերն ընդունելիս Վարչությունը ստուգում է դրանց համապատասխանությունը տնօրենի ընտրության ընթացակարգի պահանջներին: Թերությունների հայտնաբերման դեպքում հավակնորդը(ները) տեղեկացվում են երկու աշխատանքային օրվա ընթացքում: Թերությունները կարող են վերացվել փաստաթղթերի ընդունման համար սահմանված ժամկետում:

Փաստաթղթերի պատճենները մրցույթի անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ ուղարկվում են ԱԱԳԼ գիտական խորհրդին, որը մրցույթի անցկացման օրվանից առնվազն 5 օր առաջ կարող է կազմակերպել գիտական խորհրդի նիստ, որին թեկնածուները կներկայացնեն իրենց ծրագրերը:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի ապրիլի 28-ին՝ ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեում (Հայաստանի Հանրապետություն, 0028, ք. Երևան, Օրբելի եղբայրների փ. 22):

[1] Փոստային առաքման միջոցով՝ պատվիրված հետ ծանուցման նամակով ուղարկված փաստաթղթերը համարվում են ժամկետում տրված, եթե **ստացվել են** մինչև փաստաթղթերի ընդունման համար սահմանված ժամկետի լրանալը: